

**«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ԵՎ ԴՐՄԵԿՈՒԹՅԱՄԲ (ԷՔՍԵՆՌԱՏՈՎ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ /06 սեպտեմբերի 2007թվականի N 1028-Ն/**

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ և 15-րդ հոդվածի 11-րդ մասերի պահանջներին համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հավելված 1**  
**Հայաստանի Հանրապետության**  
**կառավարության 2007թ. \_\_\_\_N որոշման**

#### **ԿԱՐԳ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ՈՒՍՈՒՑՄԱՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

Սույն կարգը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման (այսուհետ՝ հեռավար ուսուցում) կազմակերպման և իրականացման գործառնությունները:

#### **II. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ**

Հեռավար (դիստանցիոն) ուսուցում կարող են կազմակերպել համապատասխան կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կամ նրանց առանձնացված ստորաբաժանումները, ինչպես նաև այլ մասնագիտական ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ ուսումնական հաստատություն):

Հեռավար ուսուցման սուբյեկտները ուսումնական հաստատության սովորողները (այսուհետ՝ ուսանողներ) և աշխատողներն են:

Ուսանողների իրավունքները և պարտականությունները կրթական ծառայություններ ստանալու, ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայից օգտվելու առումով հավասարեցվում են ուսուցման այլ ձևերում ընդգրկված ուսանողների իրավունքներին և պարտականություններին:

Հեռավար ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը և տևողությունն ըստ մասնագիտությունների որոշվում է այդ մասնագիտությունների համար սահմանված պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հեռավար ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերն իրականացվում են ուսուցման այնպիսի

ձևերով, որոնք կարող են տարբերվել ուսուցման այլ ձևերից (առկա, հեռակա, այլն) ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, դասավանդման մեթոդներով, ուսուցման տեխնոլոգիաներով, ուսանողի հետ դասախոսի աշխատանքի պարտադիր պարապմունքների ծավալով:

Ուսումնական հաստատության խորհրդի կամ տնօրենի որոշմամբ հեռավար ուսուցման տևողությունը կարող է կրճատվել այն ուսանողների համար, որոնք ունեն հարակից միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն: Կրճատված ժամկետներում կրթական ծրագրի լրիվ յուրացումն իրականացվում է անհատական ժամանակացույցով, որը հաստատվում է ուսումնական հաստատության տնօրենի կողմից:

### **III. ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՄԲ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Ուսումնական հաստատությունում ձևավորվում են առանձին ուսումնական խմբեր, որոնցում ընդգրկված ուսանողների թիվը սահմանվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքը տվյալ մասնագիտության ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերն են, որոնք կազմվում են տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչի հիման վրա: Պետական կրթական չափորոշիչի բացակայության դեպքում ուսումնական պլանը համաձայնեցվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ: Տվյալ մասնագիտության հեռավար ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց բոլոր պահանջները կատարած ուսանողին ամփոփիչ ատեստավորումից հետո հանձնվում է համապատասխան ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ, և դրա ներդիրը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով:

Հեռավար ուսուցման գործընթացը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կազմված և ուսումնական հաստատության տնօրենի կողմից հաստատած ժամանակացույցին համապատասխան:

Հեռավար ուսուցումը հիմնականում կազմակերպվում է ուսանողների և դասախոսների տարածապես անջատ պայմաններում: Նրանց միջև կապն ապահովվում է մեթոդիստների, ինչպես նաև էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով:

Ուսանողներն համար յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կազմակերպվում է կարճատև դասընթաց, որի ընթացքում նրանք ծանոթանում են մասնագիտության ուսումնական պլանին, առարկայական ծրագրերի բովանդակությանը, ատեստավորման ձևերին ու կարգին, ուսումնական հաստատության հետ կապ հաստատելու ձևերին, ուսանողի իրավունքներին ու պարտականություններին և այլն: Կարճատև դասընթացի տևողությունը չի կարող գերազանցել մեկ շաբաթը:

Ուսանողներն ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբին մեթոդիստներից ստանում են ուսումնական պլանով տվյալ կիսամյակի համար նախատեսված առարկաների ինքնուրույն ուսումնասիրման անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթներ, որոնք տրամադրվում են թղթային կամ էլեկտրոնային տեսքով, ինչպես նաև ինտերնետային ցանցով:

ՌԻՍԱՆՈՂԻ հետ կապը էլեկտրոնային միջոցներով իրականացնելու դեպքում յուրաքանչյուր ուսանողի համար ուսումնական հաստատությունում բացվում է անհատական էջ՝ համապատասխան ծածկագրով: Կապը այլ միջոցներով իրականացվելու դեպքում ուսումնական հաստատությունը սահմանում է կապի իրականացման պայմանները:

Ուսանողները թեստավորման միջոցով հանձնում է ուսումնական պլանով նախատեսված առաջադրանքները, ստուգողական աշխատանքները, ստուգաքնները, քննությունները: Տեխնիկական պայմանների ապահովության դեպքում թեստավորումը կարող է անցկացվել ինտերնետային ցանցի միջոցով: Կուրսային և ստուգողական աշխատանքները ներկայացվում են գրախոսման ուսումնական հաստատությունների դասախոսներին:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացիկ հարցերը կարգավորվում են ուսումնական հաստատության մեթոդիստների, ինչպես նաև համապատասխան ամբիոնների (հանձնաժողովների) վարիչների (նախագահների) և տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից:

Հեռավար ուսուցման ուսումնական գործընթացն իրականացվում է հետևյալ ձևերով.

1) լսարանում դասախոսի և ուսանողի անմիջական հաղորդակցման կամ էլեկտրոնային կապի միջոցների օգտագործման միջոցով,

- 2) լսարանում մեթոդիստի և ուսանողի անմիջական հաղորդակցման կամ էլեկտրոնային կապի միջոցների օգտագործման միջոցով,
- 3) ուսումնական նյութերի հետ ուսանողի ինքնուրույն աշխատանքով:

**Հավելված 2**  
**Հայաստանի Հանրապետության կառավարության**  
**2007թ. սեպտեմբերի 6-ի N 1028-Ն որոշման**

#### **ԿԱՐԳ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՄԲ (ԷՔՍԵՆՈՒՍՈՎ) ՈՒՍՈՒՑՄԱՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի դրսեկությամբ (էքստենսատով) (այսուհետ՝ դրսեկությամբ) ուսուցման կազմակերպումը և իրականացումը:

#### **II. ԴՐՍԵԿՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՍՈՒԲՑԵԿՏՆԵՐԸ**

2. Դրսեկությամբ ուսուցումը մասնագիտական կրթության բնագավառում համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը դասախոսի և ուսանողի միջև իրականացվում է անհատական ուսուցման ժամանակացույցի հիման վրա:
3. Դրսեկությամբ ուսուցում կարող են կազմակերպել համապատասխան կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կամ նրանց առանձնացված ստորաբաժանումները, ինչպես նաև այլ մասնագիտական ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ ուսումնական հաստատություն):
4. Դրսեկությամբ ուսուցման սուբյեկտները ուսումնական հաստատության սովորողները (այսուհետ՝ ուսանողներ) և աշխատողներն են:
5. Ուսումնական հաստատությունում դրսեկությամբ ուսուցմամբ ի իրավունքները և պարտականությունները կրթական ծառայություններ ստանալու, ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայից օգտվելու առումով հավասարեցվում են ուսուցման այլ ձևերում ընդգրկված ուսանողների իրավունքներին և պարտականություններին:
6. Դրսեկությամբ ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունն ըստ մասնագիտությունների որոշվում է այդ մասնագիտությունների համար սահմանված պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:
7. Դրսեկությամբ իրականացվող կրթական ծրագրերն իրականացվում են ուսուցման այնպիսի ձևերով, որոնք կարող են տարբերվել ուսուցման այլ ձևերից (առկա, հեռակա և այլն) ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, դասավանդման մեթոդներով, ուսուցման տեխնոլոգիաներով, ուսանողի հետ դասախոսի աշխատանքի պարտադիր պարապմունքների ծավալով:
8. Տվյալ մասնագիտության գծով դրսեկությամբ ուսուցման պարտադիր պարապմունքների ծավալը և ուսուցման տևողությունը որոշվում է ուսումնական հաստատության կողմից՝ պետական կրթական չափորոշիչի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական հաստատության խորհրդի կամ տնօրենի որոշմամբ դրսեկությամբ ուսուցման տևողությունը կարող է կրճատվել այն ուսանողների համար, որոնք ունեն հարակից միջին կամ

բարձրագույն մասնագիտական կրթություն, ինչպես նաև արտակարգ ընդունակություններ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով նախատեսված պահանջները յուրացնելու առումով: Կրճատված ժամկետներում կրթական ծրագրի լրիվ յուրացումն իրականացվում է անհատական ժամանակացույցով, որը հաստատվում է ուսումնական հաստատության տնօրենի կողմից:

10. Ուսումնական հաստատության խորհրդի կամ տնօրենի որոշմամբ դրսեկությամբ ուսուցման տևողությունը կարող է երկարաձգվել այն ուսանողների համար, որոնք համատեղում են ուսուցումը աշխատանքային գործունեության հետ: Երկարաձգված ժամկետներում կրթական ծրագրի լրիվ յուրացումը չի կարող գերազանցել տվյալ մասնագիտության ուսումնական պլանով առկա ուսուցման համար նախատեսված ժամկետից ավելի, քան երկու տարին:

11. Կրճատված կամ երկարաձգված ժամկետներում կրթական ծրագրի լրիվ յուրացումն իրականացվում է անհատական ժամանակացույցով, որը հաստատվում է ուսումնական հաստատության տնօրենի կողմից:

### **III. ԴՐՍԵԿՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

12. Ուսանողներից ուսումնական հաստատությունում կարող են ձևավորվել առանձին ուսումնական խմբեր, եթե դրսեկությամբ ուսուցմամբ ընդունված ուսանողների քանակը տվյալ մասնագիտության գծով կազմում է 15-20 հոգի:

13. Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքը տվյալ մասնագիտության ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերն են, որոնք կազմվում են տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչի հիման վրա: Մինչև տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչի ձևավորումն ուսումնական պլանը համաձայնեցվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:

14. Տվյալ մասնագիտության դրսեկությամբ ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց բոլոր պահանջները կատարած ուսանողին ամփոփիչ ատեստավորումից հետո հանձնվում է համապատասխան ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ և դրա ներդիրը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով:

15. Դրսեկությամբ ուսուցման գործընթացը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կազմված և ուսումնական հաստատության տնօրենի կողմից հաստատած ժամանակացույցին համապատասխան:

16. Դրսեկությամբ ուսուցումը հիմնականում կազմակերպվում է ուսումնական հաստատությունում, պրակտիկայի կազմակերպման վայրում և ինքակրթության միջոցով:

17. Ուսանողների համար առաջին ուսումնական տարվա սկզբում կազմակերպվում է կարճատև դասընթաց, որի ընթացքում նրանք ծանոթանում են մասնագիտության ուսումնական պլանին, առարկայական ծրագրերի բովանդակությանը, ատեստավորման ձևերին ու կարգին, ուսումնական հաստատության հետ կապ հաստատելու ձևերին, ուսանողի իրավունքներին ու պարտականություններին և այլն: Կարճատև դասընթացի տևողությունը չի կարող գերազանցել մեկ ամիսը:

18. Ուսանողներն ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբին իրենց դասախոսներից ստանում են ուսումնական պլանով տվյալ կիսամյակի համար նախատեսված առարկաների ինքնուրույն ուսումնասիրման անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթներ, որոնք տրամադրվում են թղթային կամ էլեկտրոնային տեսքով:

19. Տվյալ առարկայի ուսումնասիրման արդյունքներով յուրաքանչյուր ուսանող հանձնում է ուսումնական պլանով նախատեսված ստուգողական աշխատանքները, ստուգարքները, կուրսային աշխատանքները, քննությունները: Կուրսային և ստուգողական աշխատանքները ներկայացվում են գրախոսման ուսումնական հաստատությունների դասախոսներին:

20. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացիկ հարցերը կարգավորվում են ուսումնական հաստատության դասախոսների, ինչպես նաև համապատասխան ամբիոնների (հանձնաժողովների) վարիչների (նախագահների) և տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից:

21. Դրսեկությամբ ուսուցման ընթացքում օգտագործվում են ուսումնական գործունեության հետևյալ

տեսակները՝

1) դասախոսություն,

2) խորհրդատվություն,

3) սեմինար և, գործնական պարապմունքներ,

4) լաբորատոր և ստուգողական աշխատանքներ,

5) ինքնուրույն աշխատանք,

6) պրակտիկա,

7) կուրսային կամ դիպլոմային նախագծում (աշխատանք):

22. Դրսեկությամբ ուսուցման ուսումնական գործընթացն իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) լսարանում դասախոսի և ուսանողի անմիջական հաղորդակցման միջոցով,

2) պրակտիկայի կազմակերպման վայրում պրակտիկայի ղեկավարի և ուսանողի անմիջական հաղորդակցման միջոցով,

3) ուսումնական նյութերի հետ ուսանողի ինքնուրույն աշխատանքով: